
ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԼԱԼԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայոց լեզվի և նրա
դասականության մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսոր,
բանասիրական գիտությունների դոկտոր

ՄԱՐԳՈՒՇ ՄԻՐՈՒՍՅԱՆ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ մայրենիի և նրա
դասականության մեթոդիկայի ամբիոնի դոցենտ,
մանկավարժական գիտությունների թեկնածու
ՀՏԴ 81'374

**ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ԲԱՌԱՐԱՆԻ ԿԱԶՄՄԱՆ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ**

Բանալի բառեր և արտահայտություններ. տերմին, լեզվի
կառուցվածքային մակարդակներ, թեմատիկ-իմաստային սկզբունք,
միկրոհամակարգ, նկարագրական սահմանում, պարզաբանող օրինակ:

Ключевые слова и выражения: термин, языковые уровня, семантико-
тематический принцип, микросистема, описательное определение,
иллюстративный образец.

Key words and expressions: term, linguistic levels, semantic-thematic
principle, micro-system, descriptive determination, illustrative sample.

Ժամանակակից բառարանագրությանը հայտնի են տարատեսակ
բառարաններ, որոնք միմյանցից տարբերվում են նպատակով,
բառարանագրության առարկայով, մեթոդիկայով, նյութի մատուցման
եղանակներով և այլն: Դրանցից են բանասիրական բառարանները, որոնց
տեսակին են պատկանում *մասնագիտական-ճյուղային բառարանները* կամ
տերմինարանները:

Հայ իրականության մեջ տարբեր բնույթի մասնագիտական
տերմինարաններ կան, սակայն լեզվաբանական տերմինների առումով
հայերենի տերմինաբանական բառարանագրությունը գտնվում է
անմխիթար վիճակում, եթե նկատի ունենանք, որ վերջին
տերմինաբանական բառարաններից անցել է ավելի քան 30-40 տարի, և
ռչինչ չի ձեռնարկվել նոր բառարաններ ստեղծելու ուղղությամբ¹: Մա այն

¹ Պետրոսյան Հ. Զ. և ուրիշներ, Լեզվաբանական բառարան, Ե., 1975: Պետրոսյան Հ. Զ.,
Հայերենագիտական բառարան, Եր., 1987:

դեպքում, երբ ռուսական իրականության մեջ մեկը մյուսին հաջորդում են լեզվաբանական տերմինների տարաբնույթ բառարաններ, ինչպիսիք են՝ Օ.Ախմանովայի² հայտնի բառարանից հետո հրապարակ իջած ոչ պակաս արժեքավոր բառարանները՝ Վ.Դ. Ստարիչենոկի³, Տ.Վ. Մատվենայի⁴, Ի.Ի. Բոգատիրևայի, Օ.Ա.Վոլոշինայի⁵ հեղինակությամբ, մյուս կողմից ռուսական իրականության մեջ անմրցակից է համարվում լեզվաբանական հանրագիտական բառարանը⁶, որ ունեցել է մի քանի հրատարակություն:

Մասնագիտական բառարանների (տերմինարանների) շարքում կարևոր դեր է վերապահված *լեզվաբանական տերմինների բառարաններին*, քանի որ լեզվական (լեզվաբանական) տերմինների գիտակցական յուրացումը կազմում է տվյալ լեզվի գիտական իմացության հիմքը, ազգային լեզվի յուրացման բանալին, ազգային լեզվամտածողության ու լեզվական տրամաբանության խարիսխը: Այդ առումով, յուրաքանչյուր ազգի լեզվական մշակույթի զարգացման մակարդակը որոշվում է ոչ միայն լեզվական-քերականական ձեռնարկների ու տեսական մենագրությունների բազմազանությամբ, այլև տվյալ լեզվի տերմինային համակարգի մշակմամբ ու հանրամատչելի մատուցմամբ, այլ կերպ ասած՝ *լեզվաբանական բառարանների* առկայությամբ:

Արդի ժամանակներում՝ գիտության և տեխնիկայի աննախադեպ զարգացման պայմաններում, լեզվաբանական տերմինների բառարանի կազմման հարցը մեզանում դառնում է հրամայական պահանջ:

Ելնելով բուհական համակարգում դասավանդելու մեր բազմամյա փորձից՝ մենք որոշեցինք կազմել լեզվաբանական տերմինների այնպիսի բառարան, որ *ուսումնական բնույթ ունենա*: Այդ կարգի բառարանում պետք է տրվեն ոչ միայն լեզվաբանական տերմինների իմաստային բացատրությունները, այլև դրանք պետք է ուղեկցվեն լրացուցիչ մեկնաբանություններով, ցուցադրական օրինակներով, այնպես, որ յուրաքանչյուր բառահոդված ամբողջացնի լեզվաբանական որևէ հասկացության շրջանակները, ըստ այդմ՝ տվյալ տերմինի միկրոհամակարգն էլ դառնա լեզվական որևէ թեմայի համակողմանի նկարագրության դաս:

² Ахманова О.С., Словарь лингвистических терминов, М., 1969.

³ Старичёнок В.Д., Большой лингвистический словарь, Ростов-на-Дону, 2008.

⁴ Матвеева Т.В., Полный словарь лингвистических терминов, Ростов-на-Дону, 2010.

⁵ И.И.Богатырева, О.Ф.Волошина, Словарь школьных лингвистических терминов, М., 2012.

⁶ Лингвистический энциклопедический словарь, М., 1990.

Բառարանում լեզվաբանական տերմինները տրվում են ըստ բնագավառների՝ հնչյունաբանություն, գրաբանություն, ձևոյթաբանություն, բառակազմություն, բառագիտություն, բառարանագիտություն, ձևաբանություն, խոսքի մասեր, շարահյուսություն, ոճաբանություն, կետադրություն, ուղղախոսություն, լեզվի բնութագրեր, լեզվի տեսության հարցեր, լեզվաբանական մեթոդներ, լեզուների դասակարգում:

Լեզվաբանական տերմինների բառարանի առանցքային հարցերից են մասնագիտական տերմինների ընտրությունն ու առանձնացումը: Տերմինը բառ է կամ բառակապակցություն, որն արտահայտում է տնտեսական, քաղաքական, գիտական, մշակութային կյանքին, տեխնիկային և այլ բնագավառներին բնորոշ հասկացություններ⁷:

Սույն բառարանի նպատակն է համակարգել ժամանակակից դպրոցական և բուհական դասընթացներում գործածվող լեզվաբանական տերմինները, տալ դրանց նկարագրությունն ու մեկնաբանությունը, որ կարող է դառնալ հանրամատչելի ուղեցույց հայերեն ուսումնասիրողների կամ հայերենի՝ իրենց գիտելիքները խորացնողների համար:

Ինչ սկզբունքներով է կազմվել լեզվաբանական տերմինների բառարանը:

- Բառարանի տերմիններն ընտրված են ըստ լեզվի կառուցվածքային մակարդակների և ըստ նրանց տերմինային բնույթի: Յուրաքանչյուր մակարդակի տերմինները ներկայացնում են որոշակի միկրոհամակարգեր, որոնք իրենց հերթին ամբողջացնում են տվյալ բնագավառի (լեզվական մակարդակի) տերմինահամակարգը:
- Բառարանը կազմված է *թեմատիկ-իմաստային սկզբունքով*, բառահոդվածները տրվում են ոչ թե այբբենական կարգով, այլ հասկացական կարգերով, որոնք պայմանավորված են բառախմբերի իմաստային (բովանդակային) ընդհանրությամբ:

Այսպես, *արմատ* հենակետային տերմինի բացատրությունից հետո տրվում են նրա տերմինային շրջապատը կազմող միավորները, որոնք ամբողջական պատկերացում են տալիս տվյալ թեմայի վերաբերյալ:

Արմատ- Բառի նյութական-քերականական իմաստների կրողն է, նրա հիմնական մասը, որ իմաստի տեսակետից անփոփոխ է մնում բառակազմական քայլերի ընթացքում: Նախադասության ոլորտում կարող է համընկնել բառին, որն այս դեպքում կոչվում է արմատական բառ:

⁷ Տերմինաբանական ստորակարգության մասին հանգամանորեն տե՛ս Էդ.Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984, էջ 330-334: Հ.Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, էջ 578-580:

Առանց արմատի բառ լինել չի կարող: Արմատն ունի իր հնչյունային կաղապարը (հնչյունակազմը): Բաղադրյալ բառի կազմում կարող են լինել մեկ և մեկից ավելի արմատներ, միահնչյուն (միահնչյույթ) արմատներ թեև սակավ, բայց լինում են [է (կա, լինել), լատ. i (re) - գնալ. e(o) գնում եմ]: Հայերենում միաբաղաձայն արմատ չկա, կան արմատահնչյուններ, որոնք երբեմնի արմատի տարբերակներն են՝ դ - նել, տ - ալ. դրանց իմաստակիր տարբերակներն են՝ դի - ցուք, տու - ր և այլն):

Հիմնականում լինում են ձայնավորների և բաղաձայնների կապակցություններով ստեղծված արմատներ (աղ, ջուր, հաց, օդ, օձ, օր, երգ և այլն):

Ըստ խոսքիմասային արժեքի, գանազանում են՝

- *անվանական արմատ*, արմատի դերում հանդես են գալիս անուն խոսքի մասերը. քաղաք-ային, բան-ավոր, գեղ-անի, քառ-ակի,

- *բայական արմատ*- արմատի դերում հանդես են գալիս բայարմատները.՝ խոս-(խոսել), փրկ-(փրկել), վազ-(վազել), որոնցով կազմվում են ինչպես բայեր, այնպես էլ բայանուններ՝ *խոսք, վազք, փրկանք*:

Պատմականորեն կարելի է առանձնացնել՝

- *ստուգաբանական արմատ*, որ բացահայտվում է ստուգաբանական վերլուծության միջոցով, օրինակ՝ անալի (< աղ), նշույլ (շող),

- *բնիկ հայերեն արմատներ*՝ հող, ջուր, հաց, տուն, տղա, աղջիկ,

- *փոխառյալ արմատ*՝ նամակ, կոնդակ, եկեղեցի, օգոստոս, մկրատ,

- *ձայնդարձով արմատ*- առաջացել է հնդեվրոպական արմատների ձայնավորների փոփոխության հետևանքով, ինչպես՝ մարդ - մեռ - մահ, կեռ - կոր, չոր - չիր, հետ(ք) - ոտ(ք) և այլն:

• Տերմինի իմաստի բացատրությունը բառարանի առաջնահերթ խնդիրն է, որ նախատեսում է բացահայտել տերմինների հասկացական նշանակությունները և դրանք մեկնաբանել առանձին-առանձին: Բառարանում գերազանցապես կիրառվել է տերմինների բացատրության *իմաստաբանական* կամ *նկարագրական սահմանումը*. այս եղանակը վեր է հանում տերմինային հասկացության բովանդակությունն ու ծավալը, ինչպես նաև ցույց է տալիս տերմինի և լեզվական հասկացության կապը, ինչպես՝

Հնաբառեր - Նշանակում են այնպիսի առարկաներ ու հասկացություններ, որոնք ինքնին չեն հնացել, բայց որոնց արտահայտման համար ներկայումս գործածվում են այլ բառեր, ինչպես՝ *անսալ* - լսել, *գուր* - փոս, *փողոտեղ* - մորթոտել (կոկորդը կտրել), *վասն* - համար, մասին և այլն: Հնաբառերն ունեն տարբեր կարգի արտահայտություններ՝ *բառային*-

բառայթային. այրուձի - հեծելագոր, բառա-հնչյունային. արտոսը - արտասուք, երդումն - երդում, քերականական. ծածկվեցալ - ծածկվեց, հրապարակալ - հրապարակով, ձեռամբ - ձեռքով և այլն:

• Որոշակի դեպքերում կրկնությունից խուսափելու նպատակով գործածվում է *հղումը*, ինչպես՝

Գիտական ոճ - Բնորոշ է գիտական գրականությանը, դասախոսություններին, գիտական զեկուցումներին ու բանավեճերին: Հարուստ է գիտատեխնիկական, մասնագիտական տերմիններով, դատողական բնույթի բառերով, շաղկապներով: Այս ոճատեսակի առանցքը կազմում են գիտական բնագավառի տերմինները (Տե՛ս **Տերմին** բառահոդվածը):

• Բառիմաստի մեկնաբանության բաղադրիչներից է *պարզաբանող օրինակը*:

Բառարանում պարզաբանող օրինակը բերվում է բառակապակցության կամ նախադասության տեսքով՝ քաղված հեղինակային ստեղծագործություններից: Պարզաբանող օրինակներն ամբողջացնում են տերմինների իմաստային-քերականական յուրահատկությունների բնութագիրը, բացահայտում նրանց գործառական բնագավառները և այլն: Օրինակ՝

Բացահայտիչ ստորադաս նախադասություն - բացահայտում է գերադաս նախադասության գոյականական անդամի կամ անձնանիշ դերանվան (բացահայտյալի) ով կամ ինչ լինելը: Օրինակ, Վաղվա մասին մտածում են նրանք, ովքեր վստահություն չունեն իրենց ուժերի վրա (ՆԴ):

Տերմինաբանական սույն բառարանն առանձին ուսումնասիրելիս կարելի է պատկերացում կազմել լեզվի կառուցվածքային մակարդակների վերաբերյալ, սովորել նրանց միավորների ներքին կապերի բնույթը ինչպես միմյանց, այնպես էլ այլ մակարդակային միավորների նկատմամբ: Բառարանը կարելի է գործածել հայոց լեզվի ուսուցման ընթացքում՝ լեզվի յուրաքանչյուր բաժին ուսումնասիրելիս: Օրինակ, *հնչյունաբանություն* բաժինն ուսումնասիրելիս կարելի է հետևել այդ բաժնի տերմինային համակարգի բառահոդվածներին և այդ բաժնի տեսական նյութի իմացությունը խորացնել՝ բառարանում տրված տերմինների բացատրություններով, ինչպես՝

• **Հնչյունաբանություն**

• *Հնչյուն և հնչույթ.*

• *Հնչյունների հատկանիշները* - ակուստիկական հատկանիշներ, երաժշտական և ոչ երաժշտական հնչյուններ, հնչյունի բարձրություն, հնչյունի ուժ, տեմբր, հնչյունի տևականություն, հնչյունի հնչեղություն, հնչյունի լարվածություն,

- *Հնչյունների դասակարգում*
- *Չայնավոր հնչյուններ*, լեզվի դիրք - լեզվի բարձրացում, շրթունքների դիրք
- *Բաղաձայն հնչյուններ*
 - *Բաղաձայնների դասակարգումն ըստ ձայնի և աղմուկի հարաբերության*
 - եռաշարք բաղաձայններ, երկշարք բաղաձայններ
 - *Դասակարգումն ըստ արտաբերման եղանակի* - հպական հնչյուններ, շփական հնչյուններ, ձայնորդ հնչյուններ, հպաշփականներ
 - *Դասակարգումն ըստ արտաբերման տեղի* - շրթնային բաղաձայններ, երկշրթնային բաղաձայններ, շրթնատամային բաղաձայններ
- *Լեզվային բաղաձայններ* - առաջնալեզվային բաղաձայններ, լեզվատամային բաղաձայններ, լեզվաքմային բաղաձայններ, երկկենտրոն բաղաձայններ, ատամնային բաղաձայններ, կոկորդային բաղաձայններ
- *Հնչյունափոխություն*
 - *Դիրքային և փոխազդեցական հնչյունափոխություն*
 - *Շեշտափոխական հնչյունափոխություն*
 - *Փոխազդեցական հնչյունափոխություն*
 - առնմանություն, լիակատար առնմանություն, ոչ լիակատար առնմանություն,
 - տարնմանություն, ներդաշնակում, ամփոփում, համաբանություն, դրափոխություն, հնչյունների պարզեցում, հնչյունների միացում, ձայնդարձ և հերթագայություն, ժողովրդական ստուգաբանություն
- *Ընդհանուր պատմական հնչյունափոխություն*
 - ձայնավորների հնչյունափոխություն, բաղաձայնների հնչյունափոխություն,
 - երկբարբառների և եռաբարբառների հնչյունափոխություն, փոփոխություններ բառավերջում, փոփոխություններ բառասկզբում
- *Վանկ*
- *Երկբարբառ*
- *Եռաբարբառ*
- *Շեշտ* - բառային շեշտ, միատոն շեշտ, տրամաբանական շեշտ, ազատ շեշտ, կայուն-անշարժ շեշտ, կայուն-շարժական շեշտ, անշեշտություն, նախահար անշեշտ բառեր, վերջահար անշեշտ բառեր
- *Գրաբանություն*
- *Գիր*
 - պատկերագրություն, գաղափարագրություն, հնչյունագրություն

• *Այբուբեն*

- տառագրություն

• *Ուղղագրություն*

• *Ուղղագրության սկզբունքները*

- հնչյունական սկզբունք, ձևաբանական սկզբունք, պատմական սկզբունք

• *Ուղղագրական բարեփոխումներ*

• *Գրադարձություն*

• *Տառադարձություն*

• Տերմինների բացատրությունը կատարվում է բառարանագրության ոչ ավանդական սկզբունքով. յուրաքանչյուր տերմին մեկնաբանվում է բովանդակային համակողմանի ընդգրկումով, որ բառարանին հաղորդում է *ուսումնական ձեռնարկի արժեք*:

• Բառիմաստի մեկնաբանությանը հաջորդում է *պարզաբանող օրինակը*, որ բերվում է բառակապակցության կամ նախադասության տեսքով՝ քաղված հեղինակային ստեղծագործություններից: Պարզաբանող օրինակներն ամբողջացնում են տերմինների իմաստային-քերականական յուրահատկությունների բնութագիրը, բացահայտում նրանց գործառական բնագավառները:

• Լեզվական յուրաքանչյուր մակարդակի ու նրա միավորների մեկնաբանությունից հետո կատարվում է լեզվական նյութի *նպաստակային վերլուծություն* (ձևայթալի, բառակազմական, ձևաբանական և այլն):

• Բառարանի վերջում տրվում է լեզվաբանական տերմինների ցանկը՝ տերմինարան, որ պարունակում է շուրջ տերմին:

Լ.Մ.Խաչատրյան, Մ.Վ. Միրումյան

Լեզվաբանական տերմինների ուսումնական բառարանի

կազմման սկզբունքները

Ամփոփում

Լեզվաբանական տերմինների բառարանը կազմված է հետևյալ սկզբունքներով.

ա) տերմիններն ընտրված են *ըստ լեզվի կառուցվածքային մակարդակների*,

բ) բառարանը կազմված է *թեմատիկ-իմաստային սկզբունքով*,

գ) տերմինից հետո տրվում են նրա *միկրոհամակարգի տերմինները*,

դ) կիրառվել է տերմինների բացատրության *իմաստաբանական* կամ *նկարագրական սահմանումը*,

ե) գործածվում է *հղումը*,

զ) բառիմաստի մեկնաբանությանը հաջորդում է *պարզաբանող օրինակը*,

է) յուրաքանչյուր բաժնի տերմինների մեկնաբանությունից հետո կատարվում է լեզվական նյութի *նպատակային վերլուծություն*:

Л.М. Хачатрян, М.В. Мирумян

**Принципы составления учебного словаря
лингвистических терминов**

Резюме

Одним из главных вопросов составления лингвистического учебного словаря являются выбор и уединение специальных терминов. В основе данного словаря лежат следующие принципы:

- а/ термины выделяются по языковым уровням,
- б/ словарь составляется по семантико-тематическим принципам,
- в/ после ключевых терминов даются термины его микросистемы,
- г/ употребляется способ семантического или описательного определения,
- д/ пользуется прием ссылки,
- е/ употребляется иллюстративный образец,
- ё/ после толкования терминов каждого отдела, делается анализ языкового материала.

L. M. Khachatryan, M.V. Mirumyan

**The Principles of Compiling an Instructional
Dictionary of Linguistic Terms**

Summary

One of the most important issues of compiling an instructional linguistic dictionary is the choice and separation of special terms. In the basis of the given dictionary lie the following principles;

- a/ the terms are segregated on the linguistic levels,
- b/ the dictionary is compiled according to the semantic-thematic principles,
- c/ after the key terms the terms of its micro-system are given,
- d/ the means of semantic or descriptive determination is used,
- e/ the approach of the reference is used,
- f/ an illustrative sample is used,
- g/ after the interpretation of the terms of each head, an analysis of linguistic material is done.